№ 118 Երեքշաբթի Հոկտեմբերի 20 1887 Երեքշաբթի Հոկտեմբերի 20 № 118

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Խարկովից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պանդուխտը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՕՎԻՑ

Հոկտեմբերի 12-ին

Անամապահութեան բաժինը կազմում է Խարկովի արդիւնահանդէսի կարևոր մասներից մէկը։ Ձիերի հանդէսը, որ տեղի ունէր մինչև հոկտեմբերի 1-ը—կարող է համարվել շատ յաջողված։ Ձիերի քանակութեան և որակութեան կողմից՝ այդ հանդէսը առաջինն է Ռուսիայում՝ մինչև այժմ եղածներից։ Անամապահութեան հանդիսում կային. ձիեր, կովեր ու եզներ, ոչխարներ, խոզեր և տնային թռչուններ։

Ձիերը երեք տեսակի էին. հեծնելու, քշելու և մշակելու համար։ Գիւղատնտեսական հանդիսում ամենակարևորը մշակ ձին է. բայց հանդէսը աւելի հարուստ էր հեծնելու ձիերով։ Ինչպէս յայտնի է՝ մշակ ձին պէտք է լինի աւելի ծանր, աւելի մսալի, աւելի սառնարիւն քան հեծնելու ձին։ Եւրօպական մշակ ձիերի մէջ անուանի են. արդեն, պերշերոն, կլէյդեսդալ տեսակները։ Ռուսիայի գիւղատնտեսները դրանց բերել են տալիս իրանց կալուածների համար։ Արդեն ձին յարմար է մանր տնտեսութեան համար. պերշերոնը աւելի խոշոր տնտեսութեան, ուր պահանջ կայ մեծ և ուժեղ ձիերի։ Ռուսիայում ևս կան մշակ ձիերի լաւ տեսակներ, օրինակ չվէդկա, կլեպպէր հիւսիսում, բիտիւգ—հարաւում. բայց ռուս գիւղատնտեսները լուրջ կերպով չեն հետևում նրանց պահպանութեան և սպասում են բարիք եւրօպական ձիերից։ Հանդէս եկած հասարակութիւնը մեծ հետաքրքրութիւնով նայում էր ձիերին. ամեն օր ժամը 12-ից յետոյ դուրս էին բերում ձիերին հրապարակ և մանածում կամ խաղացնում։

Կովերի և եզների մասը թէև հարուստ էր, բայց չէ կարելի համարել յաջողված։ Կովապահութիւնը կարող է ծառայել երեք նպատակի—մատակարարելու կաթ, միս և այժ։ Նայած այդ նպատակների նշանակութեան, մի յայտնի տնտեսութեան մէջ աւելի գնահատում են կաթնատու կովին, միւսում մսատուին, երրորդում ուժեղ եզներին։ Հարաւային Ռուսիայում կաթնատու կովը դեռ մեծ յարգանք չունի. մինչդեռ մեծ և ուժեղ եզնը մեծ գին ունի գիւղատնտեսի համար։ Հանդիսում աչքի էին ընկնում ուկրաինեան տեսակի մեծամարմին եզները իրանց ահագին եղջիւրներով։ Ուկրաինեան կովին շատ անգամ խառնում են ունգարական կովի հետ. այդ տեսակ խառնուրդը այնքան տարածված է, որ յաճախ դժուար է լինում այնպիսի մի նախիր ճարել, ուր ունգարական կովի արիւն չը լինի։ Վերջին ժամանակներս մի քանի գիւղատնտեսներ փորձում են կազմելու խառնուրդներ ուկրաինեան և շարօլեզ (ֆրանսիական) տեսակներից և իբրև թէ բոլորովին գոհ են այդ միջին տաւարից. ապագան կը պարզի այդ փորձերի պիտանաւորութիւնը։ Կաթնատու տեսակ կովերից փոքր ի շատէ աչքի էին ընկնում չվէյցարական չվից կովերը և նրանց խառնուրդը ռուսական կովերի հետ։ Ռուս գիւղատնտեսները, եթէ ցանկանային, կարող էին իրանց սեփական տեղական կովից լաւ կաթնատու տաւար պատրաստել. բայց մինչև այժմ արհամարհանքով են նայել հասարակ կովի վրա և շարունակում են այդպէս նայել։

Ոչխարները ըստ մեծի մասին նրբաբուրդ տեսակից էին։ Նրանց մասին երկար չեմ խօսում, որովհետև ընթերցողը չէ կարող հետաքրքրվել։ Հասարակ տեսակներից աւելի աչքի էր ընկնում Բեսարաբիայի ոչխարը։

Խոզերը անգլիական տեսակներից էին, գլխաւորապէս եօրկշիր (սպիտակամաղ) տեսակները։ Անգլիական խոզերը կոլոր են, մեծ մարմնով բայց փոքր ոսկրով (փոքր գլխով և մանր ոտներով), շուտ մեծացող և սասիկ չաղացող։ Բերկշիր տեսակը աւելի չարքաշ բնաւորութիւն ունի և կարող է բաւականանալ նոյնպէս արօտի կերակրով։ Կովկասում տեղ տեղ կարող է անգլիական խոզը ծառայել խոզապահութեան լաւացնելուն։

Թռչնապահութեան մասը փոքր էր և չունէր տնտեսական մեծ նշանակութիւն։ Նախկին թռչնապահութեան հանդէսներում (օրինակ Մոսկվայում) աւելի մեծ քանակութեամբ և աւելի լաւ ընտրութիւնով էին թռչուններ հանդէս բերվում։ Հանդիսում կային բացի հասարակ հաւերից, կոխինխին և բրամապուտրա տեսակները. բացի դա հնդկահաւեր, աղաւնիներ և այլն։

Գիտնական անուանված մասում այցելուն ծանօթանում է գիտութիւնը աւանդելու կամ ժողովրդացնելու միջոցների հետ, գիւղատնտեսական գիտութեան մէջ գործադրվող գործիքների հետ։ Այս մասը արդիւնահանդիսի համար ունի միայն կրթողական նշանակութիւն։ Նա կատարած կարող է համարել իր դերը իսկապէս այն ժամանակ, երբ անդադար դասախօսութիւնների և բացատրութիւնների համար մարդիկ լինէին նշանակված։ Դժբաղդաբար՝ բացատրութիւնների համար գիտնական մասը հոգս չէր տարած։ Հաշուապահութիւնից մի քանի տեղեկութիւններ հաղորդվում էին, բայց ոչ կատարելապէս յաջող կերպով։ Գիտնական մասում ժողովուրդ չէր խառնվում. բայց այդ մասի դէմուդէմ՝ պտուղ և արմտիք չորացնելու սենեակում, ժողովուրդ միշտ անպակաս էր լինում։

Պտուղ չորացնելու սենեակում Վ. Զերնիաեվ օրամէջ դասախօսութիւն էր անում կանօնաւոր պտուղ չորացնելու նշանակութեան, նրա շահաւէտութեան, զանազան տեսակ գործիքների, վառարանների և չորացնող մեքենաների մասին։ Այս մասը կովկասցիների համար կարող է մեծ նշանակութիւն ունենալ։ Չորացրած պտուղների նմուշները, որ ցոյց էր տալիս Զերնիաեվ, բաւարար յատկութիւններ ունէին։ Կատարելագործված եղանակով չորացնելու գլխաւոր նպատակն է այնպէս չորացնել զանազան արմտիներ և պտուղները, որ սրանք չը կորցնեն իրանց գոյնը, համը, ունենան մեծ դիմացկանութիւն և ընդունակ լինեն հեռու երկիրներ ուղարկվելու։ Պտուղներ չորացնելու արհեստը օրից օր զարդանում է. ցանկալի է, որ կովկասեան դրականութիւնը մանրամասն յօդուածներ նուիրէր նրան։

Շերամապահութեան մասը Խարկովի հանդիսում փոքր էր, որովհետև շերամապահների մեծ մասը Եւրօպական Ռուսիայից դուրս են կենում և առանձին մի հակումն չեն զգում ուղարկելու իրանց ապրանքը հեռու արդիւնահանդէս, ինչպէս Խարկովինն է։ Առաջին մրցանակը (մեծ արծաթեայ նշան) ստացել է Բաբայեան, որ ունի Օրդուբաթում մետաքսագործարան, երկրորդ տեղը բռնում Զաքաթալի օրինակելի որդակրթարանը, որ դուրս է բերում առողջ որդ, բօժօժ և մետաքս, պ.պ. Անեան և Գեանջումցեան բօժօժի և մետաքսի համար և պ. Նագօրնիկ (Ռօստովի մօտ), որ կազմել է շերամապահութեան և մետաքսագործութեան համակարգված ժողովածու։ Երրորդ տեղը բռնում է Կ. Մելիք-Շահնազարեանի փոքրիկ ժողովածուն (բրօնզեայ մէդալ), պ.պ. Լանցկի (Ումանի այգեգործական դպրոցում) և Կրավչենկո։ Չորրորդ տեղը (գովութեան թերթ) բռնում են. պ. Ֆեդօրովսկու (Կիեվ. Ն.), տիկին Նաղարովայի, Բախվիի (Քութայիսի նահանգի Օզուրգէթի գաւառում) դպրոցի, պ.պ. Սաչինովի, Կապնիստի և քահանայ Կօցիցկու (Սիմֆէրօպոլի գաւ.) բօժօժները կամ մետաքսի նմուշները։ Արդիւնահանդիսում երբեմնապէս թել էին քաշում ժողովրդին ծանօթացնելու համար այդ գործի հետ։ Պ. Լէրիսէն ուղարկել է մի մեծ շերամապահական ժողովածու, որ հետաքրքրում է մասնագէտներին։

Կովկասեան մասը ունի թանդարանի, մուզէումի նշանակութիւն։ Հանդէս բերված առարկաների մի մասը հետաքրքրում է գիտնականներին, մասնագէտներին (օրինակ ծառերի կոճղները, մի քանի տեսակ սերմերը)։ Ժամանակ է փոխելու կովկասեան արդիւնագործութեան հանդէս հանելու եղանակը։ Պէտք է հանդիսին տալ զարգացող, շարժվող արդիւնագործութեան կերպարանք։ Գուցէ՝ եթէ յաջողվի Կովկասում սեփական արդիւնահանդէս կազմելու—պարզվեն շատ կարևոր խնդիրներ և աւելի արդար կերպով գնահատվեն Կովկասեան արդիւնագործութեան առարկաները։ Օտար արդիւնահանդէսներում երբեմն լինում են և անարդարութիւններ և զարմանալի չէ եթէ ասեմ, որ գնահատողները երբեմն օգուտ են ունենում Կովկասի արդիւնքները պախարակելում։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Кавказъ» լրագիրը շատ ուղիղ է նկատում, որ «Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը» շատ անգամ ամենանշանաւոր լուրերը մեզ չէ հաղորդում։ Օրինակ գործակալութիւնը աւելորդ համարեց հաղորդել մեզ այնպիսի մի աշխարհահռչակ գիտնականի մահը, ինչպէս գերմանացի Կիրխհօվ ֆիզիկոսն էր։ Եւ մենք այդ նշանաւոր մարդու մահվան մասին լուրը ստիպվեցանք քաղել մայրաքաղաքի լրագիրներից, ուրեմն 7—8 օր մահվանից յետոյ։

—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏԸ

V

Ինչ գլուխ ցաւացնեմ, մի շաբաթ էլ անգործ մնացի։ Սրտումս էլ իւղ չէր մնացել, այնքան մտածում էի։ Կնիկս, երեխաներս... Աստուած, հիմա հացի կարօտ են, ինձանից փող են սպասում, աչքները ճանապարհի է։ Իմ դուրս գալու օրը կնիկս ասում էր թէ մի շաբաթվայ հաց ունենք։ Բայց ես այստեղ ինչ բանի եմ։ Գոնէ մի նամակ էլ չեմ գրում, որ իմանան թէ եկել եմ հասել։ Ի՞նչ երեսով գրեմ։ Օտարականի բանն այդպէս է, կը գնայ մի տեղ, մինչև որ գործը աջող չը լինի, մինչև որ երեսը պարզ չը լինի, չէ կարող իր տնացուն մի մատնաչափ թուղթ գրել։ Թող երկու, երեք, հինգ ամիս բանը վատ գնայ, օտարութեան մէջ մարդը քար կը դնի կրծքին, կը լռի։ Շատ շատ մի գնացողի կը խնդրի թէ մեր տանն ասիր ես լաւ եմ։ Ա՛խ, Աստուած, այսքան էլ անբախտութիւն։ Գնացի Իսրայէլի աղայի մօտ, աղաչեցի որ 12 մանէթանոց տեղը լինի, տայ ինձ։ Ասեցին էլ հարկաւոր չես, մարդ գտել ենք։

Կերածս ու խմածս հարամ էր դառել գլխիս։ Այս ոտքս եմ և ինչ եմ։ Մարդիկ իրանց դործի ետևից են ընկած, փող են աշխատում, ես ձեռքերս ծալած նստած եմ, կարծես փողը ինձ հարկաւոր չէ։ Քիչ էր մնում, որ Սադայի մօտ լաց լինեմ։ Բայց նա ինձ քաղցր խօսքով էր անում, սիրտ էր տալիս թէ մի վախիր, տեղ կը լինի։ Խարում էր ինձ։ Իր հաշուի ետևից էր, շաբաթ ու կէսից յետոյ պարտքս մի քանի մանէթ էր դառել։

Ախ, ինչքան դժուար բան է անգործ մնալը և երեկոները այնպիսի մարդկանց հետ նստելը, ինչպէս ինձ հետ կեցողներն էին։ Ամեն օր աղաղակ, ամեն օր կռիւ, հայհոյանք, թղթախաղ։ Իմ անկողինն այնքան կոխ էին տուել, որ չոր կապերտ էր դառել, ցեխը, հողը թափվում էր, երբ քնելիս շորերս բաց էի անում։ Ի՞նչ քուն։ Փոքրիկ վերնատանը բաւական չէր, որ պապիրոսի ծուխը մլլում էլ, լամպան էլ մի կողմից էր ծուխ տալիս։ Խեղդվում էի, խեղդվում։ Առաւօտը որ ներքևի ծուխը վեր էր կացնում, սիրտս ծանր էր, հաղում էի խղդացնելով, գլուխս մինչև կէսօր տաքվում էր, ցրիւ էր գալիս։ Հայ քիչ էի ուտում, որ ծախս քիչ լինի։ Քաղցած, չարչարված, անբան, անգործ... Հիմա էլ որ միտս են ընկնում այդ սև օրերը, սիրտս արիւնով լցվում է։

Բայց նեղ օրին լայն օր էլ է լինում։ Աչխարհի բան է։

Կիրակի կէսօրից յետոյ նստած էի Սադայի մօտ, սեղանի ծայրին գլուխս կռներիս վրա դրած մտքեր էի անում։ Շամախեցի քարտաշը, որի անունը Բախշի էր, եկաւ էլի հարբած։ Դէս դէն ընկաւ, հանաքներ արաւ, ծիծաղեց, ծիծաղացրեց, հայհոյեց։ Յետոյ ինձ տեսաւ, եկաւ գլուխս բռնեց, վեր է բարձրացնում։

—Աղա, զարաբաղցի, ինչ ես սգաւոր դառել։ Լացս գալիս էր, չը խօսեցի։

—Աղա, քեզ չեմ ասում։

Սադան ինձ տեղ խօսեց, ասեց ինչ անի խեղճը, այսքան ժամանակ գործ չէ ճարում, մնացել է ձեռքը ծոցում։

—Ա՛յ, խեղճ զարաբաղցի. ամենքդ էլ այդպէս էք լինում։ Խեղճեր, խեղճեր... Կնկայ սիրտ ունէք, ապրել չէք իմանում... Գործ ինձանից ուզիր։—Եւ Բախշին գլուխս բարձրացրեց, երեսիս է նայում։

—Դու մեռնես, Սադա, Բաղիշին չը թաղեմ, քեզ թաղեմ, խօսքս խօսք է, էգուց այս խեղճին կը տանեմ, գործ կը տամ։

Ոչ թէ միայն ես, Սադան էլ չէր հաւատում հարբած մարդու խօսքին։ Իրիկունն էլի երդում, հաւատ արաւ, ասեց «Կամպանիայումը» տեղ կայ քեզ համար։ Վերջապէս հաւատացի։

Երկուշաբթի առաւօտը միասին գնացինք։ Մեծ արհեստանոց էր, հարիւրաւոր մարդիկ գործում էին։ Մեծ մեքենան այնպէս որոտում էր, որ մարդու ուղեղը շարժվում էր։ Ինձ դրին դարբնանոցում, մի մեծ ուռն տուին ձեռս։ Բանս երկաթ ծեծելն էր։

Օրեկան վարձ նշանակեցին 70 կոպէկ։

VI

Սև սև մրոտ մարդիկ, տաք կրակ, սև թոզ, որոտոց։ Սրանք էին ընկերներս։ Օրեկան մի ժամ հանդիստ ունէինք. մնացած ժամանակը ուռնով տուր, հա տուր։ Ընկերներիս մեծ մասը ռուսներ էին. կային մի չորս կամ հինգ հայեր։ Վարպետները հեռու տեղերից էին եկած, բոլորը նեմեցներ և ինչ մեծ փողեր էին ստանում։

Շաբաթը բոլորեց, վերջացաւ։ Հաշիւները ստացանք։ Շաբաթ իրիկունը դուրս եկանք նեղացած, փչրված։ Սև թոզի մէջ շաղախվել էինք։ Մի ամբողջ շաբաթ մէջքս այնքան քրտնել էր, որ հալաւս չորացել էր տախտակ դառել. մաղերի էլ ձեռք տալ չէր լինում, զտակը վերցնելիս կամ ծածկելիս սև թոզը մլլում էր։ Ձեռքերիս նայեցի. ձեռքերս սևացել էին ածուխի նման, կաշին կոշտացել էր, ճաքճաքվել։ Իսկ կռներս... դրանց մասին էլ մի հարցնէք, կասես կռներս արջի բերան էին ընկել, ցաւում էին դիշերը մինչև լոյս։

Խօսք չը կայ որ ամեն իրիկուն գնում էի Սադայի խանութում քնում։ Կուչ էի գալիս, կծիկ դառնում պատի տակին, որ ինչ է, աչքս փակեմ, դործիս վաղ գնամ։ Գիշերը երկու երեք անգամ արթնանում էի. կամ ոտս էին կոխ տալիս կամ նստում էին փորիս վրա, կամ թէ այնպէս բարձր դոռում էին... Քարտաշ Բախշին էլ հոգիս ձեռքն էր հաւաքել. աչքը որ աչքիս էր ընկնում, պկիցս բռնում էր. տեսար ինչ լաւութիւն արի քեզ,

Ուրախալի է տեսնել երբ մեր երկրում որ և է արդիւնագործութիւնը աջողվում է։ Տէր-Աստուրով և ընկերութեան լուցկիի գործարանը մեծ աջողութեամբ է պատրաստում այժմ չվեդական լուցկիներ։ Այդ լուցկիները շատ լաւ վառվում են, գրեթէ ամենևին հոտ չունեն, և բաւական էժան են, այնպէս որ կարող են մրցել Ռուսաստանի ներքին գաւառներում պատրաստվող չվեդական լուցկիների հետ. այդ լուցկիների 10 հատ արկղիկներ ծախվում են 8 կոպէկով։ Ցանկալի է որ և մեր երկրի գաւառներում տարածվեն այդ լուցկիները։

—

Ինչպէս մեզ գրում են, Ախալքալաքից դէպի Ախալցխա տանող ճանապարհում Կուր գետի վերա չինած կամուրջի քանդվելու պատճառով հացը Ախալցխայում բաւական թանգացել է այս տարի։ Ալէքսանդրոպոլի ալիւրն էլ նոյն ճանապարհով են բերում Ախալցխա։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են։ «Հոկտեմբերի 7-ին մայրաքաղաքի հայ հասարակութիւնը ճանապարհ էր գցում իր քարոզչին, հայր Խորէն Ստեփանէին, որ յանկարծ կանչվեցաւ Էջմիածին։ Ցայսմիկ չէ հայր Ստեփանէի այստեղից հեռանալու պատճառը, միայն յայտնի է որ նա հեռագրով Սինոդից հրաման էր ստացել «անյապաղ թողնել իր պաշտօնը և անյապաղ մեկնել դէպի Էջմիածին»։ Ճշմարիտ է, Պետերբուրգի հայոց գաղթականութեան մէջ կան մի երկու անհատներ, որոնք հայր Խորէնին չեն սիրում, բայց տեղիս ամբողջ հայոց հասարակութեան կողմից, բացի այդ երկու երեք անձնաւորութիւններից, հայր Խորէնը իմացաւ կարճ ժամանակամիջոցում գրաւել մեծ սէր և համակրութիւն։ Արտաշրջիկ էր այն հրաժեշտը, որ երկաթուղու կայարանում հայոց հասարակութիւնը տուեց հայր Ստեփանէին։ Միայն մի բանով ենք մխիթարում մեզ. դուցէ մի քանի ժամանակից յետոյ կրկին բաղդ կունենանք լսել մեր եկեղեցու բեմից հայր Խորէնի խելացի և ազդու քարոզները։»

—

Կիրակի, 18-ին հոկտեմբերի, ԹԻՖԼԻՍԻ իսկական արհեստագործական դպրոցի բնակարանում տեղի ունեցաւ կիրակեայ իսկական դպրոցի հանդիսաւոր բացումը։ Եկեղեցական մաղթանք էր կատարում մի ռուսաց քահանայ, որը հանդիսականներին, դպրոցի հիմնադիր տիկիններին և աշակերտուհիներին օրհնելուց յետոյ, մի կարճ, բայց զգեցիկ ճառ ասեց, գովելով հիմնադիրներին և յորդորելով աշակերտուհիներին աշխատասէր և հնազանդ լինել։ Նա յորդորեց ամենքին Աստուծու խօսքին համեմատ միահամուռ ոյժերով առաջ տանել կիրակեայ դպրոցի գործը, առանց զանազանութիւն դնելու այս կամ այն ազգութեան, այս կամ այն քրիստոնէական կրօնի մէջ։ Քահանայից յետոյ խօսեց հիմնադիր օրիորդներից մին, իշխանուհի Մարիամ Արգուտինսկի, որը ասեց թէ ժողովուրդը ուսման պահանջ ունի և կիրակեայ դպրոցի նպատակն է մի քանիսներին տարրական ուսում տալ, միւսների հետ կրկնել արդէն իրանց սովորածը։ Ճառախօս օրիորդը աւելացրեց, որ դպրոցը իր գոյութեամբ պարտական է ուսումնարանական վարչութեան պատրաստականութեանը գոհացնել ուսման պահանջը մատաղ սերունդի մէջ։ Կիրակեայ դպրոցը երեք բաժանմունքներ կունենայ՝ ռուսաց, հայոց և վրաց բաժանմունքներ։ Օրիորդը յայտնեց, որ ընդհանուր ոյժերով առաջ տանելով դպրոցը, նա անպատճառ կաջողվի և վերջացրեց իր խօսքը մանկավարժ բարօն Կորֆի խօսքերով՝ «հիմնեցէք կիրակեայ դպրոցներ և ժողովուրդը ձեզ կը սիրէ»։ Այդ խօսքերից յետոյ ուսումնարանական վարչութեան հոգաբարձու Եանօվսկի ձեռք սեղմելով օրիորդին, ընդհանրապէս շնորհակալութիւն յայտնեց դպրոցի հիմնադիրներին, աւելացնելով որ ամբողջ սրտից ցանկանում է դպրոցի կատարեալ աջողութիւն։ Դրանով վերջացաւ համեստ հանդէսը և աշակերտուհիները անմիջապէս տեղաւորվեցան կիրակեայ դպրոցին յատկացրած երեք սենեակներում, բաժանվելով երեք բաժանմունքների։ Հիւրերին թոյլ տրվեցաւ ներկայ գտնվել այդ առաջին դասին և մենք մեր կողմից ուրախութեամբ ներկայ գտնվեցանք հայոց բաժանմունքի առաջին դասին, հետաքրքրութեամբ լսելով երկու շնորհալի օրիորդների բերանից մայրենի լեզուի աւանդելը։

—

Շաբաթ օր, 17-ին հոկտեմբերի, ֆլէյտիստ Ադոլֆ Տերչակ տուեց Թիֆլիսի թատրոնում իր առաջին կոնցերտը։ Ցաւելով պէտք է խոստովանվել, որ շատ հասարակութիւն չը կար թատրոնում, բայց ճշմարիտ արժէր լսել անմման ֆլէյտիստին։ Ինքն ըստ ինքեան ֆլէյտան մի չոր ուցամաք երաժշտական գործիք է, բայց պ. Տերչակ կատարելութեան է հասցրել այդ գործիքի վրա ածելը։ Աւելի զգացմունք և արտայայտութիւն դուրս բերել ֆլէյտից, քան թէ այդ անում է Տերչակ,—անհնարին է։ Սկզբից հասարակութիւնը կարծես թէ սառն էր վերաբերվում դէպի արտիստը, բայց քանի նա շարունակում էր ածել, այնքան հասարակութիւնը աւելի ճաշակ էր առնում նրա ածելում, այնքան աւելի ոգևորվում էին ունկնդիրները և վերջապէս «Ռուսաց բապսօղիայի» և «Սօմնանբուլայի» ածելու ժամանակ հասարակութեան ոգևորութիւնը և յափշտակութիւնը իր գագաթնակէտին էր հասել։ Ֆլէյտայի վրա ածած պիէսաները բոլորն էլ իրան պ. Տերչակի հեղինակութիւններն էին։ Նա պիանօի համար էլ է հեղինակում և տիկին Շուլէր ածեց պիանօի վրա նրա մի քանի պիէսաները։ Առհասարակ Տերչակ, կարելի է ասել առանց չափազանցութեան, հրաշքներ է գործում ֆլէյտայի վրա. նրա պիանիսիմօ անմման է, մի-մի տեղ ֆլէյտայի խուլ ձայները կատարելապէս յիշեցնում են ջութակի ձայները։ Բայց մանաւանդ անմման էին այն տեղերը (օրինակ «Ռուսաց բապսօղիայի» մէջ), որտեղ Տերչակ ածելով առանց պիանօի, միաժամանակ համ եղանակն է կատարում, համ էլ ինքն իրան դաշնակցում է։ Ցոյս ունենք, որ եթէ տաղանդաւոր արտիստը երկրորդ անգամ կոնցերտ կը տայ Թիֆլիսում,—դահլիճը լի կը լինի հասարակութեամբ։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են, որ կիրակի, հոկտեմբերի 11-ին, սուրբ պատարագից յետոյ, ծայրագոյն վարդապետ Խորէն Ստեփանէ մի սրտաշարժ քարոզ խօսեց ժողովրդի խուռն բազմութեան ներկայութեամբ։ Այդ քարոզի նիւթն էր Զէյթունի հրկիզեալների թշուառ դրութիւնը. մի հարևանցի ակնարկ ձգելով Հայաստանի հին և միջին դարերի պատմութեան վրա, հայր սուրբը գեղեցիկ կերպով աւանդեց մեզ Զէյթունի անցեալը և ներկան, որ վերջին ժամանակներս այդքան առատ նիւթ է տալիս Ցանկաստանի և Ռուսաստանի հայոց պարբերական թերթերին. քարոզից յետոյ եկեղեցում իսկոյն սկսվեցաւ ստորագրութիւն յօգուտ զէյթունցիների։ Պարոն Յովհաննէս Յոլնանեանի նախաձեռնութեամբ, որ ինքն ստորագրեց 1,000 ռուբլի, ստորագրութիւնը շարունակվում է շատ աջողակ կերպով։

—

Ուրբաթ, հոկտեմբերի 16-ին, Թիֆլիսի թատրոնում ներկայացվեցաւ Մօցարտի Դոն-Ժուան օպերան։ Այդ օպերան ահա հարիւր տարի է, որ գոյութիւն ունի. նա առաջին անգամ ներկայացվեցաւ Պրագայում 1787 թուականի հոկտեմբերի 17-ին և այդ ժամանակից նա ներկայացվում է գրեթէ եւրոպական բոլոր բեմերի վրա և այժմ ամբողջ երաժշտական աշխարհը ծանում է նրա հարիւրամեակը։ Թիֆլիսի հասարակութիւնը պատուելով հռչակաւոր երաժշտի յիշատակը, ուրբաթ օրը լցրել էր թատրոնը։ Օպերայի դերերը բաժանված էին ներկայ խմբի անդամներին ամենաաջողակ կերպով, որեմն հասկանալի է, որ հասարակութիւնը պէտք է բաւական մնար օպերայի կատարումից։

—

Տվերի նահանգի Եղիմնովօ գիւղում կայ յայտնի վերնչչագինի կաթնատնտեսական մի ուսումնարան։ Այժմս խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ ուսումնարանի քիմիական բաժնի կառավարիչ Աւ. Քալանթարից ուսումնարանի լաբօրատօրիայի 1884—85 և 86 թուականի հաշիւը։

—

Տեղական ռուսաց «Тифл. Листокъ» լրագիրը հաղորդում է, որ էջմիածնի սինօդը, քննելով Թիֆլիսի հայոց կօնսիստօրիայի իրաւաբանական հաւատարմատարի հարցը, վճռեց բոլոր եկեղեցական դատերի պաշտպանութիւնը կրկին յանձնել երդուեալ հաւատարմատար Սենեքերիմ Արծրունուն։

—

Ինչպէս յայտնի է, մեր նկարիչ պ. Գէորգ Բաշինջաղեան այժմ բացել է իր նկարների ցուցահանդէս ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա) քաղաքում։ Տեղական «Донск. Пчела» լրագիրը մեծ գովասանքով է խօսում Բաշինջաղեանի նկարների մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Կ. Պոլսի «Արևելք» լրագրին Երիզայից գրում են հետևեալը։

«Սեպտեմբերի 21-ին, կիրակի գիշերը, քանի չափ աւազակք Մեծն Ս. Ներսէս Հայրապետի վանուց պարսպին մի մասած կողմը քանդելով ներս կը մտնեն և վանուց բոլոր զիւրատար ինչքերէն ի զատ նաև կը տանին սրբազան անօթները, մասունքները, հին մատեանները և այլն. սոնց մէջ նշանաւոր և նուիրական հնութիւններ ալ ունէինք։ Ս. Սկիւռն 1168 թուական կը կրէր, այսինքն 720 տարի առաջ շինուած էր և մեծագին էր։ Աւազակները բոլորն ալ զինեալ են եղեր Մարթինի և չալմախլը հրացաններով. չափազանց անպիտութեամբ վարուած են Արժ. վանահօր, երէցկինի և անոնց որդւոց հետ։ Չափազանց դանակոծած են բոլոր վանականներն՝ որք աղաչած են թէ գոնէ զգեստներնին չառնուն։ Ս. Ներսէս Հայրապետ, քաղաքէս մէկուկէս ժամ հեռաւորութեամբ Տէրսիմը շրջապատող լերան հիւսիսային կողմն է, որ ըսել է քաղաքիս հարաւային կողմը. վանքի բիւրա սպասաւորն՝ որոյ հաւատարմութիւնը կասկածելի չէ՝ ճանչած է անոնցմէ մի քանին որք կը վերաբերին եղեր Խոզաթի Աղզունիք գիւղէն Կանքոյի տղուն Եուսուֆ աղայի ցեղին։ Կիրակէ օր արշալոյսին վանահայր քահանայն կը վազէ քաղաք, խիստ ողորմելի վիճակի մը մէջ. վարչութիւնն անմիջապէս ի ժողով կը գումարի և կը փութան երթալ Վսեմ. կառավարիչ և Բարձր. Միւշիր փաշաներուն, որոց կը ներկայացնեն վանահայր քահանայն իւր խեղճ վիճակին մէջ և պէտք եղած անմիջական տնօրէնութիւնը կը խնդրեն։ Անմիջապէս 12-ի չափ հեծեալ ոստիկանք և զօրք կը ղրկուին որք ձեռնունայն կը դառնան երկու օր վերջն. անկասկած էինք որ այսպէս պիտի ըլլար, քանի գողերը վանքէն մէկնելէ 5—6 ժամ յետոյ կրնային Տէրսիմի մէջ անյայտանալ շնորհիւ իրենց ցեղապետներուն։ Թէ՛ Վսեմ. կառավարչին և թէ՛ մեր վարչութեան կողմանէ նոյն օրն իսկ հեռագրեր զարնուեցան ի Պոլիս Ազգ. Պատրիարքարան, Կարնոյ և Տաւրոսի կուսակալութեանց. կը յուսանք թէ Տաւրոսի Վսեմ. կուսակալը պիտի յաջողի գտնել գողերը, մանաւանդ որ բարձրագոյն հրամաններ ալ ցարդ հա-

---

հիմա իմաց՝ որ թէև զարաբաղցու անունը «զոչաղ» է դուրս եկած, բայց չամախեցուն չէք հասնի»։ Խոստացել էի կիրակի օրը նրա համար արաղ առնեմ։

Ընկերներս շաբաթ երեկոյեան բաղնիս գնացին. չուղեցի գնալ։ Փող շատ էր հարկաւոր ինձ։ Բոլոր աշխատածս տուի Սաղային, էլի մի բան պարտական մնացի, Բախչի համար արաղ գնեցի։ Քիչ թեթեւացայ։ Փառք Աստուծու, հիմա փող աշխատում էի, օրեկան 70 կոպէկ, չատ եմ տեսել։

Բայց մի բան որ միտս էր ընկնում, օրս սատանում էր։ Ախ էի քաշում, ասում էի ախ, Աստուած, մի չորս կամ հինգ շաբաթ այսպէս բան արած լինէի, Բնզանից էլ հրաման լինէր որ հաց չուտեմ։ Հիմա մտս մի յիսուն մանէթ կը լինէր, կուղարկէի տուն... երեխաներիս։ Ախ իմ անոյշ, իմ Սառա, իմ Սիմէօն, ծիտ դառնայի, թռչէի, մեր չէմքում կանգնէի, ինչ էք անում, ինչ էք ուտում։ Գիտեմ, հիմա ասում էք՝ հայրերնիս գնաց, եօթն սարով անցաւ, սիրտը եօթն սարի քամակին թողեց։ Չէ, իմ սիրելիք, էլի սպասեցէք... էլի Աստուած մեծ է...

Երկուշաբթի առաւօտ երեսիս խաչ հանեցի, գնացի մուրճս ձեռս առի։ Քրտինքս ու թողը էլի ինձ վեր առին։ Զեռք էր պէտք, որ բան անի, գործակատարը կանգնած նայում է, ով որ չուտ չուտ է շարժվում, ռոճիկը աւելացնում է։ Եթէ մի երկու ամիսդ ձեռք ունենայի... խիստ եմ, խիստ եմ երկաթին, մէկ տեղ պրծնում եմ, ուրիշ տեղ են սանում։ Քրտինքս ծլում է քթովս բերանս է թափվում, ծլում է գլխովս՝ ականջներս թափվում։

Ճաշի ժամանակ նստում ենք, միմեանց մի երկու խօսք ասում, չորերս ցամաքացնում։

Այսպէս երկու շաբաթ էլ բան արի։ Սաղայի հաշիւը վերջացրի, մի քանի մանէթ էլ մնաց մօտս։ Փառք Աստուծու, հիմա կուղարկեմ տուն։ Ես ցամաք հաց էլ ուտում, հացը ծանր էի ծամում որ չուտ կշտանամ, զրկում էի ինձ, որ երեխաս քաղցած չը մնայ։

Բայց տեսնում եմ որ Սաղայը խէթ-խէթ է ինձ նայում։ Նրա միտքը ով չէր հասկանում։ Նեղացած էր, որ ամեն անգամ կերակուր չեմ ուտում։

VII

Ինչպէս կերակուր ուտէի։ Մի օր մի զարաբաղցի տղայ եկաւ ինձ գտնց, ասեց որ նոր է եկել Շուշուց և ինձ մի նամակ տուաւ։ Խրիկունը կարդացի, ինչ ասեմ, գլխս կայծ ու կրակ թափվեց։ Նամակը կնիկս էր գրել տուել։ Եւ ինչ էր գրել.

«Մի ամսից աւել է մեզ թողել ես գնացել. մի մատնաչափ գիրը ինչ է, որ խնայեցիր գրես, մեզ միամտացնես։ Դուռը մնացել է երեսներիս վրա փակ, մէկը չը կայ, որ բանայ մտիկ անէ, տեսնէ քոր ենք ուտում, թէ քացախ։ Երեխաները աունը թափված, աչքները չէմքին. մի ոտի ձայն որ լսում են, վեր են թռչում։ Գիշերը երազ են տեսնում, ցերեկը պատմում թէ այսօր նամակ ենք ստանալու։ Ո՞ւր է. նամակը կարվել է մեզանից, մի զատարկ նամակը։ Դու գնացիր ու մեզ մոռացար։ Երեխաները մաշվել են, չոր ոսկոր դառել, հաց չը կայ որ ուտեն։ Էլ հարևանի դուռը գնալու երես չէ մնացել։ Եթէ իմ բերածն էլ չը լինէր, հիմա բոլորս սովամահ էինք դառել։ Զուն ձմեռ է գալիս. մենք տկլոր, անհաց, անթաց, դու հօ լաւ ես իմանում, որ երեք կօպէկ մեզ հաւատացող, տուող չը կայ. զարդս պատմելու էլ ուր գնամ։ Սիմէօնը քո գնալուց յետոյ թառամել է, մաշվել. ծիծաղ չեմ տեսել այն օրից յետոյ. մենակ մնացած ժամանակը լալիս է, ասում է ինձ տարէք հօրս մօտ։ Էլ նրան կօպէկ տուող չը կայ, որ գնա բաղարից միրգ առնի։ Առած հաւերդ հիմա ձու են ածում. մեզանից կորում ենք, համը չենք տեսնում, ծախում ենք ճրագալոյսի տակիս։ Սառան նստած գուլպա է անում քեզ համար։ Աստուծու սէրին չուտով պատասխան գրիր ու փող ղրկիր։ Եթէ էլ ուշացրիր, ամենքս պէտք է գունէ դուռն ընկնենք»։

Օտար մարդու էր գրել տուել այսքանը։ Իր սրտումը որքան կը լինէր բան թողած, որքանն էլ գրողը կը լինէր մոռացած։ Այս ցաւ ու կրակ նամակը ծալեցի ծոցումս դրի, գնացի նստեցի Սաղայի մօտ, մինչև կէս գիշեր պատասխանը գրեցի, սիրտ տուի, որ իմ մասին միամիտ մնան, գործս լաւ է, այսուհետև էլ նեղ օր չենք տեսնի։ Ուրիշ էլ ինչ գրէի։ Սիմէօնին էլ համբուրեցի։ Տատն մանէթ փող ունէի, հինգն էլ Սաղայից և Բախչուց պարտք արի, դրի նամակի մէջ։ Կիրակի առաւօտը փօստը դցեցի։

VIII

Այդ մի և նոյն օրը ճաշից յետոյ կասես թէ ոտներս փչրվել էին։ Գլուխս ծանրացել էր, ես տխուր-տրտում վեր եկայ վերնատունը, որ ընկնեմ քիչ քնեմ։ Ցեսայ որ իմ չորերի մօտ մի ուրիշի չորերն են դրել. հիմա հինգ հոգի էինք։ Էլ ամենևին դատարկ տեղ չէր մնում, ինչ պէտք է անէին թուղթ խաղացողները։

Պառկած էի, քունս չէր տանում. միտքս, ոմ գիտէր, որ տեղերումն էր։ Այդ ժամանակ եկաւ ինձ մօտ նոր դրած չորերի տէրը։ Դա մի ջահիլ տղայ էր, կը լինէր 16 կամ 17 տարեկան։ Նկաւ նստեց իր չորերի վրա, մէջքը պատին տուաւ։ Էլ ոչ խօսք, ոչ ձայն, ծպուտ։

Առաջին անդամից ես կարծեցի թէ այդ տղան նաւի վրա ծառայող է և նոր է ցամաք դուրս եկել, որ գնայ բաղնիս, լուացվի։ Նրա չորերը սպիտակ կտաւից էին, բայց սևացած, կարծես երեք օր սև նաւթի մէջ պահած են։ Կտաւը մէկ դեղնել էր, մէկ էլ սևացել. մէջքի վրա, եթէ չատ էլ չը լինէր, մի գրքի կաղմի հաստութեամբ սև կեղտ կար նստած։ Ծնկան վրա շալվարը պատռած էր, մեծ ասղով և չատ հաստ թելով կապկապած։ Գլխին մի բան կար դրած. չեմ իմանում գլխարկ էր, թէ թաղիքի կտոր, որ փողոցումն էր գտել, այնքան կեղտոտ էր, ճմռած, կոտրատած, որ ոչ գոյնը կիմանայիր, ոչ ձևը։ Հալաւ չունէր հագած. կուրծքը, արևի տակ սևացած բոչայի դեղնած կուրծք էր, երևում էր կտաւի չորի տակից։ Ոտները բոբիկ էին, դրած գլխուորի հին կօշիկնե-

սած ըլլալու են առ ինքն։ Անշուշտ Ազգ. Պատրիարքարան ալ իր ստացած հեռագրին վրա ազգու միջոցներ ձեռք առած է այս մասին։ Ս. Ներսէս Հայրապետի վանուց համար 150—200 տարիներէ ի վեր այս տեսակ բան մը չէ պատահած. կրնանք ըսել թէ քաղաքիս բոլոր վանքերուն մէջ ամենէն ապահով վիճակ մ՚ունեցող այս վանքն էր։»

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Նոր-Զուղա, 8 հոկտեմբերի

Ընթերցողաց ոմանց յայտնի պիտի լինի, որ Զուղայաբնակ հայեր Շահաբաս պարսից թագաւորի ձեռամբ իրանց «Հայաստան» հայրենիքից տարագրվեցան ի Պարսկաստան՝ և արդ Նասրէդդին-շահի կառավարութեան և նրա երկու որդիների կուսակալութեան ներքոյ այլ և այլ չնորհներ և ապահովութիւններ են վայելում։ Նոյն գաղթական հայերն էլ Նոր-Զուղային հարևան Զարմահալ և Փէրիա կոչված գիւղերի մէջ սփռված են։ Այս գիւղերի մի քանիսը Զուղայաբնակ հայերի համար ուխտատեղիք են դարձած, ոմանց համար ամբարանոց են դարձած, և ոմանց համար ապրուստ հայթայթելու միջոցներ։

Եթէ բնութեան տեսակէտով նայելու լինենք այդ երկրի վրա՝ բնութիւնը այս մասերում որպէս ուրիշ տեղերի մասերում, ամառնային և գարնանային եղանակներում շատ գեղեցիկ է։ Առաջին առարկան, որ ճանապարհորդի աչքերին կը զարնէ, այն շղթայակապ լեռներն են, որոնք շրջապատում են ամբողջ յանդիմանահայեացքը. Նրանց գագաթների վրա կը տեսնվին ձիւնի կոյտեր, որոնք ամառնային ամիս օրերում բնաւ չեն հալվում. ձիւնը գլխաւորապէս կը տեսնվի «Բարֆ-Անբար» *) սարերում։ Նրանց ստորոտներում կը տեսնվեն գոյնագեղ «Հայոց ծաղիկներ» **) որոնք չորս բոլորտիքն սփռված են։ Քանի ամիսներով առաջ կը տեսնվէր ձիւնապատ դեսին՝ իսկ այժմ նոյն տեղերում կը տեսնվի ոսկեգոյն ցորենը որ իր դլուխը հպարտութեամբ բարձրացած՝ մանդաղին և մշակին կը հրաւիրէ քաղելու։

Ճանապարհորդի ուրախութիւնը տխրութեամբ կը փոխվի, երբ իր ուշադրութիւնը բնութիւնից մարդկային գործերի վրա կը դարձնի, տեսնելով թէ մարդկութիւնը բոլորովին ընկղմված է տգիտութեան մէջ. արդեօք ինչ է սրա պատճառը։ Գիւղացին կը կարծէ թէ իր մէջ ոչինչ թերութիւն չը կայ. բայց երբ որ որոշ քննելու լինենք գիւղական կեանքը, կը տեսնենք որ լուսաւորութեան հետքն անգամ չէ երևում նրա մէջ։ Գիւղացիք ստրուկներ են և նրանց կանայք ստրկուհիներ։ Նրանք չունեն դպրոցներ իրանց երեխայքը կրթելու համար, չունեն հոգևոր և ոչ ևս մտաւոր լուսաւորութիւն, չունեն մի որ և իցէ մարդկային պիտոյից յաջողութիւններ. մի խօսքով կարծես թէ նախախնամութեան ձեռքն սրանց գլխից վերցվել է։

Հոգևոր տեսակէտով քննելու լինենք, կը տեսնենք որ գիւղացիք բոլորովին ագէտ են։ Նրանց կղերը նոյնպէս ագէտ է. դեռ Աւետարան կարդալը սորված չը սորված՝ ամեն ոք քահանայ է ձեռնադրվում։ Գիւղական կղերը յիշում է իր պարտաւորութիւնները միայն այն ժամանակ, երբ ժամկոչը նրան կանչի մի թաղում կատարելու, կամ մի երեխայ մկրտելու, կամ պսակ կատարելու։ Նա չէ մտածում որ ինքն սրանից աւելի պարտականութիւններ ունի կատարելու, այսինքն իր ժողովրդի լուսաւորութեան համար հոգալու։ Գիւղացիներից մի քանիսների տներում կը գտնվի ս. Աւետարանը, բայց այն էլ պատռված մէկ քանի հատ մեռաքսէ թաչկինակներում. գիւղացին սրան երբէք չէ կարդում, միայն երբ ինքն կամ իր ընտանիքից մէկը մի հիւանդութիւնից բռնված լինի, այն ժամանակը ա յ ս ի ն չ կամ ա յ ն ի ն չ անուամբ Աւետարանը կը փնտռէ, և չգտնելով, երեսը խաչանանելով կերթայ, կը մոռնայ նրան, իր սրտի մուրազը գտնելու։ Այն ժամանակ ս. Աւետարանը մնդուկի միջից է հանում, որի մէջ տարիներով փակված էր մնացել, այնուհետև մի հարիւր անգամ կազմը համբուրելուց յետոյ, արտասուքներ պիտի թափի, մինչև այս ինչ սրբի անուամբ իր սրտի փափագը յայտնի։ Հազար անգամ մարգարէների և սրբերի անունները կը կանչի գիւղացին, մի անգամ էլ Աստուծու անունը չի կանչի։ Գիշերները մեծ բազմութեամբ ուխտաւորներ հաւաքվում են ս. Սարգսի սարը, այնտեղ նրա ձիու սմբակների հետքերը համբուրելու, գիշերը մինչև արշալոյս ձիթաճրագներ պիտի վառվին, և իրանց կարծիքին համեմատ իրանց ուզեցածն այնտեղից պիտի գտնեն։ Կրակ հանգչեցնելում քանի անգամ իրանց երեսները կը խաչակնքեն, որ մի գուցէ դևերը իրանց վնաս չը հասցնեն, և այնուհետև ջուր կը սրսկեն վրան, մեծ սպրպփով։ Շատ ուրիշ տեղեկութիւններ կարող ենք բերել հայ գիւղացու մոտիապաշտութիւններից։

Գիւղացին միշտ կախում ունի քաղաքացիներից, միշտ պարտաւոր է իր էշերը ալիւրով, իւղով, պանրով բառնալ քաղաք տանել, որ այնտեղից իր պիտոյքը գնի։ Այնու ամենայնիւ գիւղացու հագին կօշիկները և հանդերձները միշտ պատռտորած են։

Գիւղացու հարստութիւնը կախում ունի իր մի քանի արտավար արտից, իր անասունների թվից, փողն էլ իր մօտ այնքան յարդ չունի։ Սրա համար նա միշտ ճգնում է մի ուրիշ արտավար գտնելու, մի ուրիշ գլուխ ոչխար ևս իր ստացուածքի վրա աւելացնել։

Իդական սեռն էլ նոյն դրութեան մէջ է. նա էլ պիտի իր քրտինքով հաց ուտի։ Խեղճ հարսները երբ որ ծնվել են, նեղութիւնն էլ իրանց հետն է ծնվել։ Քթակալը միշտ պիտի իրանց քթերի վրա լինի, բայց եթէ յանկարծ մի բոպէ ցած իջնի,—սկեսուրից անմիջապէս արժանանում են ամենավայրենի անէծքի. կանայք չեն կարող օտարների հետ խօսել, և ոչ էլ նրանց մօտ հաց ուտել։ Նրանք պէտք է իրանց ձեռքերը, դլուխը և աչքերը իրանց լեզուի տեղ գործածեն։ Կիրակի, տիրոջն օրն է, ասելով՝ հանդերը չեն գնայ, որպէս թէ հանգստանան, բայց ընդհակառակն այդ օրը իրանց գործը սովորականից կրկնապատկվում է. ամբողջ օրը թրիք են կոխոտում, որ իրանց թոնիրների համար վառելիք լինի, կաւէ ամաններ են չինում, կարպետ են գործում, հնոցի են հարում և շատ ուրիշ այսպիսի բաներ են անում։

Գիւղացին ամառվայ և գարնանային պայծառ եղանակներում այնքան գործի մէջ խառնված է՝ որ իր որդու հարսանիքը յետաձգում է ձմեռվայ եղանակումն անելու, քանզի այն ժամանակն իր ծանր աշխատանքից հանգստանում է. այն ժամանակ նա քաղաքային առևտրից պրծած կը լինի։ Նա սովոր է, որ իր որդու համար մղոններով հեռու գիւղերից հարսներ պիտի բերի. շատ անգամ օրեր են անցնում մինչև հարսը իր հօր տանից գնում է իր ամուսնու տունը։ Երբ որ հարսնացուն իր տանից բաժանվում է, նա վերջին հրաժարականն է տալիս իր բոլոր ազգականներին, քանզի դիտէ որ նրանց կրկին տեսնելը շատ դժուար կը լինի իր համար։ Պատահում է որ գիւղացի երիտասարդը դեռ իր հարսնացուին չը տեսած՝ իրար հետ պսակվում են և այսպիսով իրար չը սիրելու պատճառով՝ մեծ վէճեր և կռիւներ են պատահում, և երբեմն ատելութիւնը այն աստիճանն է հասնում, որ իրար սպանում են։ Գիւղացին միշտ դանդաղվում է թէ իր գործը շատ է, և սրա համար դեռ իր որդին չափահասութեանը չը հասած՝ նրան մի 25 կամ 30 տարեկան կին է տալիս, մինչդեռ այդ նոյն որդին 12 կամ 13 տարեկան է։ Այսպիսի պսակների նպատակն է մի նոր աշխատող ձեռք ևս աւելացնել իր տան մէջ կատարվելի ծանր գործերում։

Ե.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Daily News» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից թէ Գերմանիայի և Իտալիայի համաձայնութեան յաջողել է նմանօրինակ մերձեցում Ռուսաստանի և Ցունաստանի մէջ։

—Կ. Պոլսի եւրոպական լրագրիները, նոյնպէս և հայոց թերթերը հաղորդում են, որ գերմանական դեսպանը, որ վերջերս վերադարձաւ Կ. Պոլիս, շատ նպաստաւոր ազդեցութիւն գործեց թիւրքաց մայրաքաղաքի քաղաքական շրջանների վրա, յայտնելով Սուլթանի մօտ ընդունված լինելուց յետոյ, որ եւրոպական խաղաղութիւնը պիտի անշուշտ պահպանվի, քանի որ ոչ մի տէրութիւն հակամիտ չէ խանգարել խաղաղութիւնը և որ Գերմանիան, միւս մեծ պետութիւնների հետ, պիտի աջակցի Թիւրքիային համաձայնութիւն կայացնելու՝ բոլգարական խնդրի վերաբերմամբ։

—Սոֆիայից հեռագրում են, որ Դունայի վրա գտնվող քաղաքները հրատարակված են պաշարման դրութեան մէջ։

—Փարիզից հեռագրում են, որ նախագահի փեսա Վիլսոն անմիջապէս Ելիսեան պալատից անցաւ Avenue Jena փողոցի վրա գտնվող սեփական տունը։

—Հռոմից հեռագրում են, որ լուր կայ թէ աբիսսինացոց զօրավար Բաա-Ալուլա յաղթութիւն է տարել իտալացոց զօրքերի վրա։

—Վերջին ժամանակներս ռուսաց մամուլը պահանջում էր, որ Բերլինի դաշնագրութիւնը այսուհետև ոչնչացած համարվի։ Այդ առիթով գերմանական պաշտօնական լրագիրները նկատում են, որ այդ դաշնագրութիւնը ոչնչացած ճանաչել անկարող է նրա ստորագրող միայն մի տէրութիւնը, քանի որ այդ արգելք չի լինի դաշնագրութիւն ստորագրող միւս տէրութիւններին յայտնել, որ դաշնագրութեան պայմանները իրանց համար պարտավորեցուցիչ են։ Իրաւաբանօրէն մի այդպիսի քայլ անել, կը նշանակէր որ ընդունվում է այն դրութիւնը, որ որոշված էր Փարիզի դաշնագրութեամբ։

—Պետերբուրգից գրում են «Русск. Кур.» լրագրին, որ այնտեղի դիպլոմատիական շրջաններում այն եզրակացութեան են եկել, որ Կոբուրգի պրինցը իր դրութիւնը ամրացրել է Բոլգարիայում և թէ Նրան Սոֆիայից արտաքսել չեն կարող ոչ Թիւրքիան, ոչ Ռուսաստանը և ոչ էլ Եւրոպան։ Այժմս կրկնվում է այն, ինչ որ եղաւ Բումիլիայում, ուր Հոհենցոլերնի պրինցը իշխան դարձաւ, և մինչև այժմս իշխում է Կարլոս առաջինի տիտղոսով։

—Աթէնքից հեռագրում են, որ այնտեղ կազմակերպված է մի յանձնաժողով, Տրիկուպիսի նախագահութեամբ, որ պէտք է առաջ տանի բալկանեան պետութիւնների միութեան հարցը։ Սուլթանը խոստացել է իր աջակցութիւնը, այն պայմանով, որ Թիւրքիային տրվի առաջնակարգ դեր։

—Պրինց Ֆերդինանդ իր գործակալների միջոցով աշխատում է, որ տեսակցի Միլան թագաւորի հետ։ Հարաւային Բոլգարիայում օրից օր աւելանում է անբաւականութիւն այժմեան կառավարութեան դէմ. այդ պատճառով այդ կողմերը ուղարկված են բազմաթիւ զօրքեր։ Սերբիական կառավարութիւնը անբաւական է դրանով և բոլգարները աշխատում են այդ տեսակցութեան

---

*) «Բարֆ-Ամբար» Սանդիբարան դիւղում մի սար է, որի վրա տարին մինչև գլուխ ձիւն կերևայ, և իսկ բնական մէկնութիւնն է «Ձիւնի ամբար կամ կոյտեր։»

**) Մի ծաղիկ է, որ գարունքին կերևայ, և գիւղացիք սրան «Գոլ Արմանի» կը կոչեն, որ կը նշանակէ «Հայոց ծաղիկ»։

րի մէջ, մի ոտի չորս մասները դուրս էին ցցված ճեղքված կաշու տակից։ Երեսին նայէիր, չորերի պէս դեղնած, յետոյ սևացած. կասէիր իր օրումը երեք չէ լուացել։ Բերանի երկու կողմերին հաւաքվել էր չորացած սև կեղտը. կարծես թէ փոքր երեխայի պէս մեծ-մեծ ոսկորներ է կրծոտել մի քանի օր, մռռացել է բերանը սրբել։

Այս բոլորը ես տեսայ աչքիս տակից նայելով։ Տեսայ և այս բոլորը մոքումս տալից այն պատճառով, որ այդ միջոցին ես միաք էի անում իմ և տանս մասին։ Նամակը մտիցս չէր փախչում։ Տունդ ծակվի, աղքատութիւն ասած բան, ինչեր չես անում այս աշխարհում։ Այսպէս կեղտի, ցեխի մէջ կորած, ինձանից հինգ անդամ վատ պատառոտած այս խեղճը տեսնես որ տեղից է ընկել այս քաղաքը. ինչ անէ, ուր դնայ, որ այդպէս չը լինի։ Մի կտոր հաց աշխատելու է եկել, սրա հացն էլ այսպէս են տալիս։

Անծանօթ տղան միաք արաւ, միաք արաւ, վերկացաւ, բացեց հին թաղիքի մեծ կտորը, որի մէջ կարծում էի թէ նրա շորերն են դրած։ Բայց չոր Աստուած տար, միայն մի հին պատառ պատառ եղած կարճլիկ վերարկու էր փաթաթված։ Թաղիքի կէսը գցեց տակը, պառկեց, կէսը շուռ ածեց իր վրա ու... քնեց։

Ես ցած իջայ, քունս չէր տանում։ Սաղայից հարցրի, ասեց խեղճ, անդործ տղայ է, հօրով որբ, դարաբաղցի, ունի միայն մայր։ Ինքը Սաղայը խղճալով ձրի թողել էր մեզ հետ քնելու։

—

IX

Ես էլ խղճում էի այդ տղային։ Ասած է թէ խեղճի լեզուն խեղճը կը հասկանայ։ Մի երկու անդամ միմեանց մօտ նստեցինք, տեսայ որ վատ մարդ չէ։ Շատ քաղցր զրոյց է անում և ինչ տեղերից համբաւներ ունի։ Մի ամբողջ շաբաթ նըստացնէիր, կը նստէր, կը խօսէր ամեն մէկի մասին, առաջին հարուստից սկսած մինչև վերջին մշակը։ Մեր հայերը շատ լաւ են ասել թէ «շատ ապրողն այնքան չի իմանայ, որքան շատ մանեկողը»։ Հաստատն ասած, Բագուի մէջ չէր լինի ծակ ու ծուկ տեղ, որ նա չը ճանաչէր։ Եւ շատ խոնարհ տղայ էր. ով ուզէր, իրաւունք ունէր նրա ճակատին զարկել ինչ հայհոյանք որ լեզուին կը գար. նա չէր պատասխանի, աչքերը գետնին կը զցէր, նայողը կասէր չէ լսում։ Մեծ, փոքր, ով ինչ պահանջէր, իսկոյն կը կատարէր, քաղաքի ծայրը ուղարկէիր կէս գիշերին, «չէ» չէր ասի։ Անունը Սահակ էր։ Բայց տեսնում էի որ շատ սէր ունի դէպի թղթախաղը։ Հէնց որ խաղացողները հաւաքվում էին, շրջան կազմում, Սահակը նստում էր նրանց մօտ. տեղից շարժվել չէր իմանում։ Ինքը թէև չէր խաղում, բայց բոլորի հաշիւը անսխալ կը պահէր և մէկ-մէկ կասէր։

Հէնց այդ քաղցր լեզուի պատճառով միշտ իսօսացնում էի Սահակին։ Երեկոները գործից գալիս էի վաստակած, փշրված. նրանից լաւ խօսքընկեր չէր լինի. նրա պատմութիւններին վերջ չը կար։ Ախ, որքան խղճում էի տղային, որքան ցաւում էի նրա համար։

Այսպէս անց էի կացնում կեանքս օտարութեան մէջ։ Ժամանակ անցաւ, մի քանի կոպէկ հաւաքեցի։ Բայց վարձս քչացրին։ Ցմեռ էր դալիս, շատ բան չը կար, բանւորի պակասութիւն չէր լինում։ Օրերը կարճացել են, ասում էին, ամառվայ գինը չէ կարելի տալ։ Այժմ ստանում էինք 60 կոպէկ։ Վաղուց ես մտադիր էի չը մընալ այդ գործում։ Իմ բանը չէր։ Տեսնում էի որ օրից օր գործն ինձ յաղթում էր, ոյժս պակասում էր։ Հիմա էլ այդպէս արին։ Էլ ինչ սրտով ահագին ուռնը բանեցնէի ձեռքերումս։ Ամառ օրերը սկսեցի գործի մտն դալ, Սահակն էլ մի կողմից էր մտն դալիս, որ յարմար տեղ գտնի, ինձ իմացուցայ։ Բայց Բագուի վատ ժամանակն էր, շատ գործեր ձմռանամուտին դադարեցրել էին, շատ մարդ յետ էր դառել տունս։ Ճար չունէի, 60 կոպէկն էլ համաձայն էի. հէնց միայն անդործ չը մնայի, հէնց միայն չարթազլուխ մի բան մնար գրպանումս, թէ չէ, մինթէ ես չէի իմանում, որ հինգ 60 կոպէկի բան էի անում...

Ցուն փող ուղարկելուց ամիս էր անցել, պատասխան չէի ստանում։ Էլ հանգիստ ու դադար չունէի։ Ինչ եղաւ, ողջ են, թէ գլուխները փորձանք է եկել։ Ուշս, միտքս, խելքս Ղարաբաղ էր։ Ախ ու վախս որ շատ լսեց Սահակը, մի օր մի լաւ բան ասեց։ Փողը ես դրկել էի մեր հարևան Հայրապետի անունով, որ ստանար, տար կնոջս. իսկ այդ Հայրապետի եղբայրը Բագու էր վերնում. ասեց դնա, հարցրու, դուցէ նա իմանայ, թէ փողը տեղ հասած է թէ ոչ։

Գնացի։ Այն իմացայ, որ Հայրապետը շատ ժամանակ է որ Շուշի չէ, գնացել է գիւղերը առևտրի։ Սա ինչ կրակ է, Տէր-Աստուած. հիմա երեխաներս քաղցած կոտորվել են։ Գլուխս ծեծեցի, վայ տուի, էլ որտեղին կը հասնի։ Մարդ սպանելը սրանից լաւ չէր։ Ես լաց եղայ Հայրապետի եղբօր մօտ։ Այնքան սիրտս լցվել էր... Ախր ես այսպէս էի երեխայ պահել, մեծացրել։ Խալիճալուի ձորերումը ձիւնի, անձրևի, կարկուտի տակ, օր ու գիշեր չասելով, առ ու վախ չիմանալով, սրանից, նրանից մանրուանք առնելով ու քաղաքումը կոպէկ կոպէկ ծախելով երեխայ էի պահել, մեծացրել, որ հիմա... հիմա ողջ են, մեռած են։ Էլ որ օրվայ համար էի ապրում աշխարհս երեսին։

Հայրապետի եղբայրը սիրտս հանգստացրեց, վեր առաւ, տարաւ ինձ փոստատունը։ Այնտեղ ասացին այսպէս ու այսպէս թուղթ գրիր, բեր, որ զրկած փողդ տան Հայրապետի անուանը։ Գնացինք գրել տուինք, փող տուինք, մի երկու ժամ էլ դրա համար չարչարվեցանք։

Դու Աստուծու բանին նայիր. չան քթից ջուր խմելով փող աշխատես, կաշի փչացնես, ու այսպէս մսխես։ Ինչի նման է այսպիսի աշխատանքը։

—Շան մսի նման։ Ոչ ես եմ կարողանում հանգիստ ուտել, ոչ էլ նրանք, որոնց համար այսպէս տար ու ձոր եմ ընկել։

(Կը շարունակվի)

միջոցով վերջ տալ տարաձայնութիւններին։

—Ինչպէս երևում է Սուլթանը ոչինչ չէ ուզում անելու բոլգարական հարցին վախճան տալու համար։ Նրա այդպիսի տրամադրութիւնը վերաբերում են գերմանական դեսպան Բաղովիցին, որ ամեն կերպ դիմադրութիւն է ցոյց տուել ռուսաց դեսպան Նէլիդովին։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինում ապրում է մի պարոն, որին կարելի է ֆանատիկոս համարել առողջապահութեան մէջ։ Միշտ ճաշելով մի և նոյն հիւրանոցում, նա երբէք չէ հաւատում, որ նրան կերակրում են առողջարար ուտելիքներով և ամեն ճաշից նա իր հետ տանում է գրպանում ոսկորներ և մսի կտորները։ Այդպիսի մնացորդներից նա կազմել է մի ամբողջ թանգարան, որի մէջ բոլոր ոսկորները և մսի կտորները ունեն իրանց համարներ և նրանց վրա նշանակված է թէ որ թւից կերած ճաշից են մնացած։ Զը հաւատալով լուացարարներին, և վախենալով թէ գուցէ լուանալուց յետոյ սպիտակեղէնը վարակվի ուրիշի հիւանդութիւնով, նա երբէք ստիտակեղէն չէ հագնում։ Վերջին ժամանակներս նա իր համար նոր շորեր էլ չէ կարել տալիս, այն պատճառով, որ շորի կտորով կարելի է որ և է վարակիչ հիւանդութիւն ստանալ. այդ պատճառով նա հագնում է իր արդէն մաշված հագուստները։

* * *

Հռօմի աղջկանց ստորին ուսումնարանների աշակերտուհիները միասին գործում են մի զոյգ գուլպա պապին նուիրելու, նրա յիսնամեայ յոբելեանի պատճառով։ Գուլպաները ճանապարհորդում են ուսումնարանից դէպի միւս ուսումնարան և ամեն մի աշակերտուհի գործում է այնքան հանդոյց, որքան տարի ունի։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԽԱՐԿՕՎ, 16 հոկտեմբերի։ Դատաստանական պալատում երդուեալների մասնակցութեամբ քննվում էր հանքային ինժէնէրների Պոդիմօվսկու և Նէստերովի և արհեստանոցների վերատեսուչ Անոֆրիեվի գործը, որոնք մեղադրվում էին ապօրինի գործողութիւններում ծառայութեան ժամանակ, որի հետևանքն էր պետական գանձարանին հասցրած նիւթական վնասը։ Այդ անձինք ծառայում էին Լուգանսկի արքունի գործարանում և կատարում էին մասնաւոր պատուէրներ։ Մեղադրեալներին պաշտպանում է քրէական իրաւունքի պրոֆէսօր Վլադիմիրով։

ԲՕՄԲԷՅ, 16 հոկտեմբերի։ Գենեռալ Նուր-Մահմէդ, որ փախաւ Էմիր-խանի հետ, և որին բռնեցին Հերաթի մօտ, հրապարակապէս դիմատված է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 հոկտեմբերի։ Այսօր եկեղեցում այդ կատարվեցաւ «Современныя Извѣстія» լրագրի վախճանված խմբագրի, Գիլիարով-Պլատոնովի համար։ Ներկայ էին. ազգային լուսաւորութեան մինիստրը, սրբազան սինոդի օբէր-պրոկուրորը, բարձրաստիճան բազմաթիւ անձինք և մի քանի գրողներ։ Հանգուցեալի մարմինը ուղարկված է Մոսկվա։—Լրագիրները հաղորդում են, որ դիտաւորութիւն կայ բարձրացնել 22 կոպէկից մինչև 25 կոպէկ մաքսահարկը արտասահմանից բերվող ձկնային ապրանքների իւրաքանչիւր պուդից։

ՓԱՐԻԶ, 17 հոկտեմբերի։ Գրէվի ընդունեց երէկ Բուվիէին և սենատի նախագահին։—Մինիստրական ճգնաժամը և մինչև անդամ հանրապետութեան նախագահի հրաժարականը հաւանական են համարում, եթէ ազգային ժողովը կը վճռի պարլամէնտական քննութիւն նշանակել պատանշանների առևտրի գործի վերաբերմամբ։ Վիլսոն Էլիսէեան պալատից իր սեփական տունն անցաւ։ Բիւդժէտային յանձնաժողովը որոշեց վերացնել դաւանութիւնների բիւդժետը։

ԴՕՐՏԲԷՆՏ, 17 հոկտեմբերի։ Փարիզեան կոմսը ուղևորվեց դէպի Անգլիա։

ՍՕՖԻԱ, 17 հոկտեմբերի։ Ազգային ժողովին առաջարկած օրինագծերը վերաբերվում են մինիստրական ներքին վերանորոգութիւններին։

ՎԻԷՆՆԱ, 17 հոկտեմբերի։ Կառավարութիւնը մերժեց չէխերի պահանջը միջնակարգ դպրոցների վերաբերմամբ։ Աւստրիական կայսրը ընդունելով այսօր աւստրիական և ունգարական պարլամենտների պատգամաւորութիւնները, ասեց. «Ձըշմարիտ է որ Եւրոպայում տիրում է, առաջվայ պէս, անապահովութեան զգացմունքը, որը ստիպում է կառավարութիւնը յետ չը մնալ ուրիշ կառավարութիւններից պետութեան զինուորական ոյժերի զարգացման մասին հոգացողութեան վերաբերմամբ, սակայն թոյլատրելի է ենթադրել որ նոյն պետութիւնների միացած գործողութիւնները և ջերմեռանդ ջանքերը, որոնք ձգտում են դէպի խաղաղութեան պահպանելը, կը պահպանեն և ապագայում քաղաքակիրթ աշխարհը խաղաղութեան խախտվելուց։»

ՓԱՐԻԶ, 17 հոկտեմբերի։ «La Justice» լրագրի ստացած տեղեկութիւնների հիման վրա, Բուվիէ, Լբրուայէ և Ֆլոկէ, Գրէվիի հետ երեկոյեան ունեցած տեսակցութեան ժամանակ հաւատացրին հանրապետութեան նախագահին, որ պատգամաւորներից շատերը, որոնք քուէարկել էին Կինէօ դ'Օրնակո պատգամաւորի առաջարկութեան անյապաղ քննութիւնը, դիտաւորութիւն ունեն այժմ, առաջիկայ քուէարկութեան ժամանակ, պարլամենտական քննութեան յարմարութեան հարցում Գրէվիին չենթարկել դժուարին դրութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի։ Լրագիրները հաղորդում են, որ մտադրութիւն կայ ուժեղացնել Պետերբուրգեան, Մոսկվա-Բրէստեան, Կուրսկ-Խարկովեան, Կօզլով-Վօրոնէժ-Բոստովեան և Անդրկովկասեան երկաթուղիների գործունէութիւնը, կառուցանելով երկրորդական ուղիներ այդ գծերի մի քանի բաժինների երկայնութեամբ։ «Новости» լրագիրը հաղորդում է որ երդուեալների իրաւասութեան կազմակերպութեան ծրագիրը վերջնականապէս մշակված է և որ նրանց իրաւասութիւնից կը վերցվեն, ի միջի այլոց, այն յանցանքները և զեղծումները, որոնք կատարվում են հասարակաց և մասնաւոր բանկերի մէջ ծառայողների ձեռքով։ Նոյն լրագիրը հաղորդում է, որ յունվարի 1-ից կաֆէի վրա դրված մաքսահարկը կը բարձրացնվի մինչև 3¼ ռուբլի պուդից, նոյնպէս այլ և այլ սպէկուլացիաներին առաջն առնելու համար, տարիքի մէջ կատարվելի որ և է փոփոխութիւններ այսուհետև կը հաղորդվեն մաքսային իշխանութիւններին հեռագրի միջոցով։

ՓԱՐԻԶ, 18 հոկտեմբերի։ Պարլամէնտական յանձնաժողովը միաձայն հաւանութիւն տուեց պատանշանների առևտրի գործի մասին քննութեան նշանակելուն։ Մինիստրութիւնը վճռեց չընդդիմանալ այդ որոշմանը, քանի որ նոյն քննութիւնը պահանջում է և ինքն Վիլսոն։ Հաղորդված լուրը Գրէվիի դիտաւորութեան մասին՝ հրաժարական տալ իր պաշտօնից, հերքվում է։ Նախագահական ճգնաժամը այսուհետև վերցված պէտք է համարել, իսկ մինիստրականը դեռ ևս հաւանական է երևում։

ԽԱՐԿՕՎ, 18 հոկտեմբերի։ Լուգանսկի գործարանի մէջ եղած զեղծումների մասին գործը վերջացաւ։ Բոլոր երեք մեղադրվածները, Պոդիմօվսկի, Նէստերով և Անոֆրիեվ, արդարացրած են։ Էկսպէրտները միաձայն յայտնեցին որ գործարանում մասնաւոր պատուէրների կատարելուց՝ պետական գանձարանը շահ ունեցաւ։ Պրոկուրորը հրաժարվեցաւ մեղադրանքից։

ՊԵՏԵՐԲՍԻՐԳ, 19 հոկտեմբերի։ Լրագիրները հաղորդում են, որ արտասահմանից բերվող հիւանային և ճախարակագործային առարկաների վրա դրված մաքսային հարկը մտադրութիւն կայ մեծացնել պուդից 70 կոպէկ։

ԲՕՄԲԷՅ, 19 հոկտեմբերի։ Բաղիկչանից հաղորդում են, որ Գօլէմ-Խայդեր-Վարադակ իր հարիւր կուսակիցներով դալիս է Բուխարայից Էմիր-խանի հետ միանալու նպատակով։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Հոկտեմբերի 16-ին

Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ		21½	պէնս.	
— — Համբուրգի վրա	—	182	պֆ.	
— — Փարիզի վրա	—	226½	սան.	
Ոսկի — արժէ — հինը	—	›	—	կ.
— — — — նորը	8	›	95	›
Մաքսային կուպօններ —	. .	178	›	75 ›
Արծաթ — — —	. . .	1	›	30 ›
Բօրսային դիսկօնտներ —	. .	5¾	և	› 7% ›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի		99	›	75
— — — — 2-րդ —		98	›	62
— — — — 3-րդ —		98	›	62
— — — — 4-րդ —		98	›	62
— — — — 5-րդ —		98	›	62
— — — — 6-րդ —		—	›	—
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.		97	›	75
— — 2-րդ —		97	›	62
— — 3-րդ —		97	›	87
Ներքին 5% առաջին փոխառութ.		274	›	—
— երկրորդ —		247	›	25
5½% բէնատ	. . . . .	102	›	—
Ոսկեայ բէնատ	. . . . .	193	›	—
Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն	. . . . .	164	›	—
Նոր երկաթուղային բէնատ	. . .	98	›	37
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	. . . . .	166	›	50
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի	. . .	98	›	—
5½% գրաւական թղթեր խերսօնի կալուած բանկի	. . . . .	99	›	—
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.		101	›	—
— — Պօլտավայի —	—	101	›	—
— — Պետ.Տուլսկ. —	—	101	›	—
— — Կիևի —	—	101	›	—
— — Մոսկվայի —	—	101	›	—
— — Բեսարաբ. Տավր. —		101	›	—
— — Նիժ. Սամար. —		101	›	—
— — Վյատկայի —		101	›	—
— — Թիֆլիսի — 27 և 43 տ.		99	›	—
— — Բուենոսայիսի-18 և 43 տ.		99	›	50
Վլադիկաւ-Կամսկի բանկի ակցիաները		733	›	—
Ռուսաց երկաթուղիների դլխաւ. ընկ.		264	›	—
Բիբինսկ-Վլադիմիրի ընկ.	. . . . .	86	›	25
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	. . . . .	94	›	87
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	.	95	›	25
Օդէսայի — —	.	94	›	25
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	.	83	›	75
Նոր փոխառութիւն	. . . . .	83	›	12

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամրանում է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անդրկովկասեան երկաթուղու գծի վրա ապագրական հրատարակութիւններ վաճառող

ԻՇԽԱՆ Կ. ԲԷԲՈՒԹԵԱՆԻ ԵՒ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՐԷԿԼԱՄՆԵՐ և այլն, Անդրկովկասեան երկաթուղու կայարաններում կախ անելու համար, գործակալութեան ժամանակաւոր գրասենեակում «Կենտրոնական գրավաճառանոցում» Թիֆլիսում, Գօլովինսկի պրոսպէկտի վրա, տուն Միրիմանովի։

1—1

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 23-ին հոկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ ALPHÉE (ԱԼՖԷ) մտնելով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա։

Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ագենտներին՝ ԲԱԹՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆ-ԺԷՐԻՆ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑԻՆ։

3—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, հոկտեմբերի 28-ին, ՄԻՆԳՐԷԼԻԱ (MINGRÉLIE) շոգենաւը, նաւապետ ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արծրունի գալերէում, № 103.

3—4

ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

(Вѣнскій магазинъ)

Գօլովինսկի պրոսպէկտի վրա, Մղիվանիի տանը, առաջին կլասիկական գիմնազիայի դիմաց։

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի յարգելի հասարակութեանն, որ ՄՕՏ ՕՐԵՐՍ ստացել եմ զանազան յայտնի և նշանաւոր գործարաններից ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ տղամարդկանց և երեխայոց աշնանային և ձմերային ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ամենավերջին ձևի։ Ամենի համար գները մատչելի և ձեռնտու են։

Վ. Խուդավերդեանց

3—12

EXPORTATION-IMPORTATION

CONSTANTIN P. CHÉHIANTZ

MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԽԵԱՆՑԻ առևտրական գրասենեակը լինելով ՄԻԼԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի ֆաբրիկանտների հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները՝ մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի մնացորդք, բուրդ, բամբակ, ցորենեղէն, նաւթ և ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրոպայում։ Յանձնարարութեամբ կընդունի դարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապրանքներ Կովկասի համար։ Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնտու պայմաններով փող կը տայ ի հաշիւ. մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հասցէով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie МИЛАНЪ (Италія).

Дозволено цензурою, Тифлисъ 19 октября 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз.